ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/187

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Քոյլոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11359-2021 գրությամբ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 09.07.2021թ. թիվ 1/18-2/42306-2021 գրության հիման վրա, 14.07.2021թ.-ին «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 14.07.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը 15.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/187 համարի ծածկագիրը:

22.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. **<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 09.07.2021թ.-ի թիվ 1/18-2/42306-2021 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2021 թվականի մայիսի 10-ին կնքվել է ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1 ծածկագրով Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի համաձայն Մասնակիցը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրան-

քատեսակներ: 2021 թվականի մայիսի 19-ին Մասնակիցը մատակարարել է Պայմա-նագրով սահմանված ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին:

Կոմիտեն տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքատեսակների մատակարարման համար (Պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետից՝ հունիսի 5-ից հետո) Մասնակցին բազմիցս (բանավոր կերպով) տվել է ողջամիտ ժամկետ, իսկ արդեն 2021 թվականի հունիսի 18-ի թիվ 1/18-1/37654-2021 գրությամբ Մասնակցին ծանուցվել է, որ ապրանքատեսակների մատակարարման համար Կոմիտեն տրամադրում է ևս 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ և մինչև տվյալ ժամկետի ավարտը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում Կոմիտեն միակողմանի կլուծի Ընկերության հետ կնքված Պայմանագիրը:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը Կոմիտեն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի մայիսի 10-ին կնքված թիվ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1 ծածկագրով Պայմանագիրը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 16.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11359-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել 1 հրավիրված նիստին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը 19.07.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«1. Գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

1.1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով 30.03.2021 թվականին հրապարակել է թիվ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013» էլեկտրոնային աճուրդը (այսուհետ նաև գնման ընթացակարգ):

1.2. Գնման ընթացակարգի շրջանակում Պատվիրատուի և «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև Մատակարար) միջև 10.05.2021 թվականին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1» մատակարարման պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր):

1.3. Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25-րդ օրացույցային օրը՝ 07.06.2021 թվականը ներառյալ:

1.4. Պատվիրատուի և Մատակարարի միջև ապրանքների մատակարարման ապրանքների ժամկետների վերաբերյալ ծագել է վեճ և վերջնական համաձայնության ձեռք չի բերվել: Ըստ Պատվիրատուի ապրանքների մատակարարման վերջնաժամկետն է հանդիսանում 05.06.2021 թվականը, սակայն այն իրականում հանդիսանում էր 07.06.2021 թվականը:

1.5. Պատվիրատուն 18.06.2021 թվականին ծանուցել է մատակարարման ժամկետները 5 օրացույցային օրով երկարաձգելու համար և դրա վերաբերյալ ծանուցումը ուղարկել է փոստային առաքմամբ, որը Մատակարարը ստացել է 23.06.2021 թվականին, արդեն իսկ այդ 5 օրացույցային օրը լրացած:

1.6. Պատվիրատուն 07.07.2021 թվականին միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) կարգի 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝

1. Պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

2. Մեղքի բացակայությունն ապացուցում է պարտավորությունը խախտած անձը:

3. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական միջոցների բացակայությունը:

4. (...):

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով

նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման դեպքում է նոր միայն առկա նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, ավելին նշված պարագայում առկա է նաև պարտադիր վավերապայման պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի պարագայում նոր միայն որպես հետևանք նախատեսված պատասխանատվության միջոց: Իսկ եթե առկա են պարտավորության խախտման համար մեղքի բացակայության հիմքեր, ապա վերանում են նաև հետևանքները՝ պատասխանատվության միջոցները, իսկ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը: Իսկ ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Մասնակցի ստանձնած պարտավորության խախտման արդյունքում պետք է առկա լինի նաև Պատվիրատուի կողմից գնման գործընթացին Մասնակցի հետագա մասնակցության դադարեցումը, որը իր հերթին պետք է իրականացվի համապատասխան ընթացակարգով:

Անդրադառնալով մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների կատարմանը, ապա դրանք պետք է դիտարկել երկու կողմերի վարքագծի համատեքստում, մասնավորապես եթե Պայմանագրով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո որոշակի ժամկետ, ապա այդ ապրանքների մատակարարման վերջնաժամկետը պետք է լինի հստակ, այդ թվում կողմերի կողմից այն պետք է մեկնաբանվի գործող օրենսդրությանը համապատասխան, այլ ոչ թե սուբյեկտիվ, հակառակ պարագայում կողմերի միջև պարտավորության կատարման վերջնաժամկետի վերաբերյալ վեճը կարող է հանգեցնել պարտավորության չկատարմանը, ոչ թե Մատակարարի մեղքով, այլ այն կողմի մեղքով ում կողմից գործող օրենսդրությանը համապատասխան սխալ է կիրառվում պարտավորության կատարման վերջնաժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 329-րդ հոդվածի համաձայն՝ եթե ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

Նշված իրավական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ եթե օրերով հաշվարկվող ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը, իսկ այդ օրը պարտավորությունը կարող է կատարվել մինիչև տվյալ կազմակերպության աշխատանքային ժամի ավարտը: Ընդ որում նշված ժամկետում պարտավորության կատարումն իրագործելի է, եթե մինչ այդ Պատվիրատուի կողմից պարտապանի պարտավորության կատարման համար՝ գործող օրենսդրության կարգի խախտմամբ, պարտավորության կատարման առավել կարճ ժամկետներ չեն սահմանվել: Ուստի այս պարագայում խախտվել են Մատակարարի իրավունքները և Պատվիրատուի կողմից ստեղծվել են անհարկի միջամտություններ, խոչընդոտելով պարտավորության կատարմանը:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Պատվիրատուն Մատակարարի կողմից ապրանքների ընդունման վերջնաժամկետ է սահմանել 05.06.2021 թվականը ներառյալ, որը ոչ աշխատանքային օր է, ուստի վերոհիշյալ իրավական նորմերի համաձայն ապրանքների մատակարարման վերջնաժամկետը համարվում էր 07.06.2021 թվականը: Պատվիրատուի կողմից ապրանքների մատակարարման առավել կարճ ժամկետ սահմանելը ստեղծեց Մատակարարի կողմից պարտավորության կատարման խոչընդոտներ: Նշվածը շարունակվեց նաև Պատվիրատուի հաջորդիվ գործողություններում, մասնավորապես Պատվիրատուն 18.06.2021 թվականին ծանուցել է մատակարարման ժամկետները 5 օրացույցային օրով երկարաձգելու համար և դրա վերաբերյալ ծանուցումը ուղարկել է փոստային առաքմամբ, որը Մատակարարը ստացել է 23.06.2021 թվականին, արդեն իսկ այդ 5 օրացույցային օրը լրացած: Նշվածով պայմանավորված Մատակարարը չի կարողացել կանխորոշել իր վարքագիծը Պատվիրատուի պահանջին և վեճը շարունակվել է: Մատակարարման նոր ժամկետը Պատվիրատուի կողմից սահմանվել է 5 օրացույցային օր, ոչ թե ծանուցումը ստանալուց հետո, այլ հենց այդ պահից և այդ ծանուցումը արդեն իսկ ժամկետը սպառված ստանալը

կրկին ստեղծել է վեճ: Ապրանքների մատակարարման համար նոր ժամկետ սահմանելու անորոշ մեկնաբանությունը՝ թե այդ ժամկետը որ օրվանից պետք է հաշվարկի, ստեղծել է իրավական որոշակիության տեսանկյունից Մատակարարի վարքագիծը առաջարկված ժամկետներին համապատասխանեցնելու անհանրինություն, որով պայմանավորված ապրանքների մատակարարման վերջանաժամկետը հստակ, գործող օրենսդրության համապատասխան չսահմանելը և Մատակարարի համար դրանով պայմանավորված խոչընդոտներ ստեղծելը, բացառում են Մատակարարի մեղքը, քանզի պարտավորությունները կարող են կատարվել պայմանագրով նախատեսված ժամկետներում և դրանից կարճ ժամկետներ սահմանելը և այդ ժամկետում պարտավորության չկատարելը դիտարկել պարտավորության կետանց, խոսում է Պատվիրատուի ոչ իրավաչափ վարքագծի մասին, որով պայմանավորված առկա չէ Պայմանագրի էական պայմանի խախտում, քանզի էական պայմանի կատարման առավել երկար ժամկետ էր սահմանված, իսկ նոր ժամկետը որոշակի սահմանված չէր:

Նշվածի համատեքստում պետք է փաստել, որ Մատակարարի կողմից չեն խախտվել պայմանագրի էական պայմանները, այլ դրանք խախտվել են Պատվիրատուի մեղքով պարտավորության կատարման առավել կարճ ժամկետներ սահմանելու և լրացուցիչ խոչընդոտներ ստեղծելով, որով պայմանավորված Պատվիրատուն գործել է ոչ իրավաչափ և առկա պայմանագիրը միակողմանի լուծվել է ոչ իրավաչափ եղանակով, ուստի առկա չէ Մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «ՍՈՖԹ ԹՐԵՅԴ» ՍՊ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

4. <u>ՍՑ-LO-2021/187 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2021թ.-ին կնքվել է թիվ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

iii. Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25-րդ օրացույցային օրը:

iv. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 07.07.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի մայիսի 10-ին կնքվել է ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր: Պայմանագրի համաձայն Մասնակիցը պարտավորվել է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով մատակարարել համապատասխան ապրանքատեսակներ: 2021 թվականի մայիսի 19-ին Մասնակիցը մատակարարել է Պայմանագրով սահմանված ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին: Կոմիտեն տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքատեսակների մատակարարման համար (Պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետից՝ հունիսի 5-ից հետո) Մասնակցին բազմիցս (բանավոր կերպով) տվել է ողջամիտ ժամկետ, իսկ արդեն 2021 թվականի հունիսի 18-ի թիվ 1/18-1/37654-2021 գրությամբ Մասնակիցը ծանուցվել է, որ ապրանքատեսակների մատակարարման համար Կոմիտեն տրամադրում է ևս 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ և մինչև տվյալ ժամկետի ավարտը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում Կոմիտեն միակողմանի կլուծի Ընկերության հետ կնքված Պայմանագիրը:

Վերը նշված հանգամանքը հանդիսանում է Ընկերության կողմից պայմանագրի էական խախտում, ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի բ) կետը Կոմիտեն ստիպված է Պայմանագրով նախատեսված պայմանները չկատարելու համար միակողմանի լուծել 2021 թվականի մայիսի 10-ին կնքված թիվ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1 ծածկագրով Պայմանագիրը և Պայմանագրի մասով գանձել «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված 18 525.06 ՀՀ դրամի որակավորման և 12 350.04 ՀՀ դրամի պայմանագրի ապահովման գումարները: ՀՀ պետական եկամուտների կոմիտեն նաև նախաձեռնում է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11359-2021 գրությամբ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը

կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները…:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25-րդ օրացույցային օրը:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի և «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.05.2021թ.-ին կնքված թիվ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25-րդ օրացույցային օրը: 2021 թվականի մայիսի 19-ին Մասնակիցը մատակարարել է Պայմանագրով սահմանված ապրանքատեսակները, սակայն դրանք չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին: Պատվիրատուն տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքատեսակների մատակարարման համար (Պայմանագրով սահմանված մատակարարման վերջնաժամկետից՝ հունիսի 5-ից հետո) Մասնակցին բազմիցս (բանավոր կերպով) տվել է ողջամիտ ժամկետ, իսկ արդեն 2021 թվականի հունիսի 18-ի թիվ 1/18-1/37654-2021 գրությամբ Մասնակցին ծանուցվել է, որ ապրանքատեսակների մատակարարման համար տրամադրվում է ևս 5 օրացուցային օր ողջամիտ ժամկետ: Սակայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարվել, ինչի արդյունքում Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությունը, միակողմանի լուծել է կնքված թիվ «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/013-1» ծածկագրով Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 07.07.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն գործի փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուի կողմից Մասնակցին ուղարկված 18.06.2021թ.-ի թիվ 1/18-1/37654-2021 գրությունը նախ ուղարկվել է փոստային առաքման ծառայության միջոցով և ապա ստացվել է 23.06.2021թ.-ին: Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գործում առկա նյութերով այդ գրության էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված և ստացված լինելու հանգամանքը նույնպես չի հիմնավորվում: Պատվիրատուն ինչպես լիազորված մարմնին, այնպես էլ ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չի ներկայացրել այդ փաստը հիմնավորող որևէ վերաբերելի ապացույց, այն դեպքում, երբ այդ փաստի հաշվառմամբ է հնարավոր գնահատել, արձանագրել ու ապացուցված համարել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման փաստը:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությամբ պայմանագրի միակողմանի լուծման համար փաստական հանգամանք է հանդիսացել Մասնակցի կողմից 19.05.2021թ.-ին մատակարարված ոչ պատշաճ ապրանքի ողջամիտ ժամկետում պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելը, որի ժամկետի խախտման հիմքով Պատվիրատուն 07.07.2021թ.-ին միակողմանիորեն լուծել է կողմերի միջև կնքված պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա

լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.07.2021թ.-ի թիվ 26/26-1/11359-2021 գրությամբ «Սոֆթ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/187 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**